

ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ա. Գ. ԶԱՔԱՐՅԱՆ

Սովետական երկրի պատմական անցած ուղու, այդ թվում հոգևոր-մշակութային բարդ ընթացքների ու արժեքների վերաիմաստավորման ու վերագնահատման հարցերը մեր օրերի հրապարակայնության ոգով լայնորեն քննության են առնվում կենտրոնական մամուլի ու պարբերականների էջերում, գրականության ու արվեստի գործիչների համագումարներում ու համաժողովներում, կլոր սեղանների շուրջը:

Նկատելի հապաղումով այդ հարցերին հրամայաբար պետք է որ ձեռնամուխ լինենք նաև մենք՝ անհրաժեշտ դասերով տեղյակ լինելու համար հայ գրողների ստեղծագործական-քաղաքացիական խիզախումներին, միաժամանակ այն ծուղակներին ու ծանծաղուտներին, որպիսիք՝ տասնամյակների շարունակ ուղեկցելով, խոչընդոտել են գրականության ու արվեստների բնականոն զարգացմանը: Ամեն դեպքում կարևորը մնում է գեղարվեստական ճշմարիտ արժեքների խորքային մեկնությունը՝ էության մեջ, պատմական ծավալներում ու հեռահար արձագանքներով, բնագրային ու ենթաբնագրային նրստվածքներով, այդ ամենը ծառայեցնելու համար մեր օրերի դեմոկրատացման ու վերակառուցման խնդիրներին, այսօրվա ու գալիք սերունդների լուսավոր-ձգտումներին:

Հասկանալի է, ստալինյան և լճացման ժամանակների փորձություններին ամենից ավելի ենթարկվել է գրականությունը՝ համերկային առումով, ինչպես և Հայաստանում, որտեղ հենց 20-ական թվականներից գաղափարական-քաղաքական ամբաստանությունների թիրախ են դարձել գրականության առաջնակարգ ներկայացուցիչները՝ Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ս. Զարենցը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, այնուհետև Վ. Թոթովենցը, Զ. Սալյանը: Որպես կանոն հետագայում նույնպես միայն տաղանդավորները... Հարձակումներն առավել տևական ու կատաղի են եղել հատկապես Ս. Զարենցի և Ա. Բակունցի դեմ, այնքան որ Հ. Սուրխաթյանը, ի վերջո, ստիպված է եղել հրապարակորեն հայտնել, թե այդ ամենը պարզապես թեյադրված է «հեղինակավոր լինելու» նախանձից¹: Նախանձորների բառացիորեն ամենօրյա ոտնձգություններից, իսկապես ասած, կարելի է սարսափել, և, սակայն, երբեք չպետք է մոռանալ, որ հարձակումները պարբերաբար բորբոքվել են հերթական վերին հրահանգներով: Այսպես. 1928-ի հոկտեմբերի 17-ին Պրոլետգրողների միության կոմֆրակցիայի նիստում միահամուռ քվեարկությամբ միությունից հեռացվում է Բակունցը, իսկ «վարչության անդամությունից» Զարենցը, միաժամանակ որոշվում է բանաստեղծի հալճը քննության առնել ԶԱՊՊ-ում²:

Մեղադրանքը Վ. Ի. Լենինի գինակից, Լենինի հանձնարարությամբ 1921-ից «Красная НОВЬ» հեղինակավոր ամսագրի խմբագիր Ա. Վորոնսկու անվան հետ կապվող «վորոնսկականությունն» էր: Տաղանդավոր գրաքննադատ, հրապարակախոս և գրող, որը Ստալինի հրահրումներով արդեն իսկ 1928-ին դուրս է մղվում գաղափարական ասպարեզից, 1937-ին արժանանալով միլիոնավորների բախտին: Եվ ահա, ավելի քան 50 տարի անց ցավով ու բողոքով է արձանագրվում Ա. Վորոնսկու, Ա. Պլատոնովի, Մ. Բալ-

¹ «Նորհրդային Հայաստան», 10.1X.1928:

² «Պրոլետար», 27.1X.1928:

գակովի, Ա. Ղեժնեկի և շատ ուրիշների կորուստը՝ մշակութային կյանքի ու բարքերի, չափանիշների ու մակարդակի նահանջի ու անկման ժանր հետեւականներով³։

Տասնամյակների հեռավորությունից «վորոնսկիականություն» համարված մեղադրանքների հոլովվող տարափում, իսկապես ասած, անհնար է որսալ բանական որևէ հատիկ։ Ծիշտ-հակառակը. ակնհայտ է Վորոնսկու, «Красная новь»-ի շուրջը համախմբված գրողների, գրականագետների ու քննադատների աննահանջ շահախնդրությունը հանուն իսկական գրականության՝ և՛ դադափարական, և՛ գեղարվեստական առումներով։ Դրա փոխարեն ողջամիտ հետադարձ հայացքով դժվար չէ նկատել, որ նման հրահրումներով, այլև հենց նույն տարիներին պրոլետգրողների շարքերը համալրելով՝ այսպես կոչված «բանվոր հարվածայիններով», քանակապես հզորացվում էր մի բանակ՝ ընդդեմ ճշմարիտ գրողների ու գրականության։ Հիմնականում կիսագրագետ, շնորհագուրկ ու հավակնոտ երիտգրական նման հավաքագրումներով գրականության հունը՝ շեղելով երկրի տնտեսական-հասարակական, հոգևոր-բարոյական բուն ընթացքներից ու խնդիրներից, ուղղվում էր դեպի արհեստականորեն սրվող դասակարգային պայքարի նկրտումներ։

Երկրի բուն կյանքում մեծագույն «իմաստունը» նախապատրաստվում էր «Մեծ բեկման»՝ մեծագույն աղետներով հղի ժամանակների, իսկ ճշմարիտ գրականությունը ահազանգերով կարող էր խանգարել նրա թմբկահարվող ծրագրերին։

Անշուշտ, բոլոր տհաճություններով հանդերձ, և՛ Չարենցը, և՛ Բակունցը, ինչպես և նույն մեղադրանքին արժանացած Սուրխաթյանը ներքին դիմադրած հպարտությամբ են վերաբերվել վորոնսկիականություն համարված վայրկյանի մեղադրանքներին, մանավանդ որ առավել անհամբերները շտապում էին վորոնսկիականությանը հավելել Ալ. Մյասնիկյանի անվանը առընչվող «սպեցիֆիզմը»։ Իսկ ո՞րն էր այդ՝ այդպես կոչված «սպեցիֆիզմը»։

Էսպես Հովհ. Թումանյանի՝ «...Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի»։

Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ապագա Հայաստանն է, ազատ հարազատ հողը, ժողովուրդը...»⁴, — պատգամին խորապես հարազատ այն պահանջը, որ շարագրված է Ալ. Մյասնիկյանի «Պրոլետարական գրականության նվիրված «Մուրճ» ամսագրի № 1-ի առթիվ» հոդվածում⁵։

Առաջին իսկ ականարկներով հարազատ ժողովրդի ճակատագրին ու հոգսերին զինվորագրված Ակսելը այդ հանգանակներից չէր նահանջել կիսաքայլ իսկ։ «Կոմալմանախին» հաջորդած՝ Ալ. Մյասնիկյանի հետ ունեցած զրույցից հետո, «Standard»-ի համարները կրակի հանձնելով, ապա և արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց հետո 1925-ի սեպտեմբերին ատեղծելով «նոյեմբեր» միությունը, վերջնականապես այդ հանգանակներին է վերադառնում Չարենցը։

Գաղափարական խորացող այդ հարազատությամբ էլ 1926—1928 թթ. հաստատվում է Չարենցի և Բակունցի «անաղարտ» եղբայրությունը, որ Լենաստեղծը սրբադոժել է «Ա. Բ.-ին» «անեղծ ներբողով»՝ 1936-ի հոկտեմբերի 14-ին առնելով արդեն «հերոսականից» «խեղճ բարեկամ» Էարձա Ակսելի շարչարանքների բոթը։

Չարենցի գրական ճակատագրական այդ դարձը նախ նշանալորվում է «Երևանի ուղղիչ տնից» նոթագրությամբ, ապա «էպիքական լուսարացով»։

³ Актуальные проблемы изучения истории русской советской литературы («Вопросы литературы», 1987, № 9, с. 45—49).

⁴ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1951, էջ 419.

⁵ «Խորհրդային Հայաստան», 1. XII. 1922.

«Լիրիքական անտրակտով», այնուհետև «Գիրք ճանապարհի»-ով և կյանքի վերջին տարիների վաստակով: Ստեղծագործական սխրալի նշանաձողեր, առանց որոնց անհնար է պատկերացնել կամ ներկայացնել հայ ժողովրդի 20—30-ական թվականների բուն կյանքը, հասարակական-սոցիալական-իրավական փոխհարաբերությունները, հոգեբանությունը, հեղաբեկումները, ըստ ամենայնի բարդ ու դրամատիկ պատմությունը:

Գրականագիտությունը, չգիտես ինչու, մի տեսակ երկչոտություն է մոտենում «Ուղղիչ տնից»-ին: Այնինչ տեղին է ասված, որ ամեն մի հասարակության իրական պատկերը ներկայացնում են նրա բանտերը: Չարենցի նկարագրած ուղղիչ տունը՝ բնակիչներով, իրավական դրությամբ ու փոխհարաբերություններով, հեղափոխության կյանքի կոչած հասարակության հայելին է՝ նրա վաղ շրջանի արդարադատությամբ, աշխատանքային, դեմոկրատական-լուսավորական նույնպիսի եռուգեռով, ինչ բնորոշ էր դրսի կյանքին: Միաժամանակ նոթագրության առաջին էջից վերջինը այդ ամենին ուղեկցում է ցավի ու տխրության տաճնապալի մի ղողանջ, որը, անձնականից բացի, կարիք ունի հասարակական պատճառների վերհաման: Չմոռանանք, որ այդ նույն տաճնապալի ղողանջով է տրոփում «էպիքական լուսաբացը»: Շարքի Լենինի հիշատակին նվիրած «Մահվան քայլերգով», բողոքի ու ծառացման թղթերով բանաստեղծը բացահայտորեն հուշում է, որ իր երկնած մահվան քայլերգը՝ համառ պայքարի հասարակական քայլերգ է:

...Եվ լուռ ննջած Առաջնորդի դագաղի
Երթին ելած բազմություններն այդ անահ
Երգում տվին պայքարելու կատաղի—
Մինչև վերջին, մինչև վերջին հաղթանակ...⁶

Իսկապես, միամտություն կլինեիր մտածել, որ «Standard»-ի առիթով Մյասնիկյանի հետ զրույցը վերաբերել է միայն գրական հարցերի, նույնը կարելի է ասել, անդրադառնալով մինչև Չարենցի արտասահման մեկնելը նրանց ունեցած հաջորդ հանդիպումներին, քանի որ այդ ընթացքում, ակնաթանգով հանդերձ, Չարենցը հիմնավորապես մտերմացել էր Մյասնիկյանի հետ: Կասկած չի կարող լինել, որ Մյասնիկյանի միջոցով Չարենցը տեղյակ էր Ստալինի մասին Լենինի հայտնի նամակին, այլև Մյասնիկյանի վերաբերմունքին Ստալինի հանդեպ, ինչպես և վերջինիս ծնյալ հայատեցությանը: Ավելորդ չէր լինի մտաբերել նաև, որ «Կապկազ թամաշան» անմիջական արձագանք էր Հայաստանի ԿԿ առաջին համագումարում (1922, հունվարի 26—29) Լեոնային Ղարաբաղին վերաբերող Ալ. Մյասնիկյանի արած այն հայտարարությանը, ըստ որի՝ «Եթե բնութագրենք Կով. բյուրոյի վերջին նիստը, ապա այնտեղ նստած էին Ահարոնյանը, Թոփիբեաշևը և Չխենկելին: Այսպես՝ Ադրբեջանն ասում էր, որ, եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա նավթ չենք տա»⁷:

Այնպես որ պատահական չէին Մյասնիկյանի մահից հետո նրա, ինչպես և Հայաստանի պատմության դեմ ծայր առած ոտնձգությունները (անպայման ներքին հրահանգներով), որոնց հեղինակները հենց 20-ական թվականներին Չարենցի գրչով արժանացել են կծու էպիգրամների: Հիշենք և վերստին անեծքով մտաբերենք մեր ժողովրդի պատմության կեղծարարներին հասցեագրված չարենցյան տողերը՝ արձանագրված դեռևս 1929-ին.

Փրկի՛ր մեր տունը քոսոս կովից,
Մեր պատմությունը... Անկապ հովից:

⁶ Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, Երևան, 1968, էջ 55: Այնուհետև նույն հրատարակությունից և «Անտիպ ու չհավաքված երկերից» (Երևան, 1983) արված մեղբորումները կնշվեն բնագրում:

⁷ Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988, с. 33.

Եվ սրա տակ բանաստեղծի ծանոթությունը՝ «Կարելի է նաև՝—Անկման, բովից:— Անկամ հովից և այլն, ըստ ճաշակի» («Անտիպ և...», էջ 264):

Ահա և տողեր «Ժամանակակից Կարամզինին» էպիգրամից.

Դու «պատմություն» ես մեզ համար գրել,
Եվ պարծենում ենք մենք էլ քեզանով,
Որ գրիչդ դու մի կողմ ես դրել
Ով գրել արյամք ու խարազանով...
Քո հողվածներում կան բարձր մտքեր
Եվ սուրբ կնուտի ու արյան հետքեր («Անտիպ և...», էջ 272):

Ընդգեմ տնաբույս այդօրինակ ծառայականների նույնպիսի մարտա--հրավեր էր և «նոյեմբեր» միությունը, որը տեական հարձակումների էր ար--ծանանում անգամ 60-ական թվականների սկզբներին:

1935—1937 թթ. հարցաքննությունների ժամանակ Չարենցը կրկնելով՝ կրկնել է, որ Մյասնիկյանի վախճանը և Բերիայի ձեռքի գործն է⁵: Չարենցը՝ Մյասնիկյանի պաշտամունք ունեւոր, որի վկայությունն են նաև «Գիրք ճա--նապարհի»-ում զետեղված հայտնի «Ա. Մ.» խորագրով լափատողերը.

Ե՛լ, բարձրացի՛ր դագաղից և կրկի՛ն երեւա աշխարհին,
Անհեր, բրոնզյա քո ձեռքով կրկին մեր ընթացքը վարի:
Դու կոչված էիր լինելու ղեկավար երկրի ու դարի:—
Քեզ տրված էր ոսկյա մի բեկոր լենինյան վսեմ հանճարից (IV, 437):

Որոշակի է լենինյան հասարակական նորմերի, լենինյան գծի և կոփված--քի գործիչների կարոտը, այդ դիրքերից Մյասնիկյանի գործունեության մար--տահրավերային գնահատականը: Այսպես մեր օրերում բացվող-բացահայտ--վող հանգուցների շառավիղներով հարկավոր է հետադարձ հայացքով տրա--մաբանորեն իմաստավորել քաղված և ապա մյուս քառատողի «Կործանվող մեր երկրի համար դու եղար փրկության առաքաստ» (IV, 438) տողի տա--րողությունը, հիշելով նաև, որ մինչև կուսակցության XX համագումարը Ալ. Մյասնիկյանի անունը համարյա արգելված էր: Միաժամանակ հարկ է այդ ամենին հավելել նաև 18.III.1934 տարեթիվով բանաստեղծի օրագրային գրա--ռումը. «Կյանքում իմ հանդիպած մարդկանցից ամենամեծ տպավորությունն ինձ վրա թողել է Ալ. Մյասնիկյանը... Բոլոր էպիտետներից նրան կազդեր «բրոնզաձուլ»-ը, որ և ես նրա վերաբերմամբ կիրառել եմ մի քանի անգամ իմ բանաստեղծություններում: Ոչ միայն մոռումբնալ ղեմքը, այլև ինքն ամբողջովին կարծես ձուլված էր բրոնզից և թողնում էր լիքը, ինքնաբավ, լիակշիռ՝ էության տպավորություն... Քչերը կարող էին դիմանալ այդ նայ--վածքի ուժին և իրենց հայացքը չխոնարհել նրա ֆիզիկական ճնշման ներ--քո» (VI, 480):

Ալ. Մյասնիկյանը «լիակշիռ էություն» էր դպրոցական նստարանից, որի բացարձակ ընդունակությունները ամեն անգամ հիացմունքով էր վերհիշում վաստակաշատ Երվանդ Շահազիզը՝ նոր նախընկալի թեմական դպրոցի տեսուչը. «Աղեքսանդրի» ուսումնառության տարիներին: Անկասկած նույն--օրինակ զգացողություններով էլ լի «Երկրագործը» պատկերի համար երի--տասարդ Մյասնիկյանին նախատիպ է ընտրել Մ. Սարյանը, որի առիթով գրում է. «...Այդ ժամանակ (1907-ին՝ Ա. Չ.) մտահղացել էի նկարել «Երկ--րագործը» մեծ պատկերը: Ցանկանում էի ցույց տալ աշխատանքի մարդուն բնության գրկում: Երկար որոնումներից հետո անմիջապես գտա, որ իմ նոր-

⁵ Ե. Չարենցի ռեպրիտացիայի կապակցությամբ 1954 թ. հոկտեմբերին ստեղծվել է հատուկ հանձնաժողով: Հանձնաժողովի անդամներից հանգուցյալ գրականագետ Հակոբ Սա--լախյանը իր ժամանակին որոշ նյութեր տրամադրել է մեզ, որոնցից մեկում կարգում ենք. «Мнеки Чаренца. Он говорил, что авиакатастрофа, при которой погиб в 1925 г. 23 марта бывший секретарь Заккрайкома КПСС Мясников,—дело рук. Берия».

բարեկամի (ուսանող Մյասնիկյանի՝ Ա. Զ.) դեմքը խիստ հարմար է ապագա կտավիս հերոսի տիպը նկարելու համար և փոքր մի ճեպանկար արի նրանից»⁹։

Ավելացնենք նաև, որ, ինչպես Չարենցը, ամեն առիթով Սարյանը նույնպես մեծագույն հարգանքով էր արտահայտվում Մյասնիկյանի մասին, և որ Մյասնիկյանի հանդեպ վերաբերմունքը այդպիսին է եղել համարյա բոլոր ակնավոր ու շարքային մտավորականների, որոնց մեծ մասի որոշակի կամ անորոշ ակնարկները համընկնում էին Չարենցի համոզմունքին. այն, որ Ալ. Մյասնիկյանին մեջտեղից վերացրել է Բերիան՝ Ստալինի հանձնարարությամբ։

Այս տեսանկյունից առկա են բազմապիսի մեկնության կարոտ հանգույցներ, որոնց շղթայում, իրոք, սրտառու է հայրենիքի բախտի ծանրագույն ժամանակների Տերյան-Մյասնիկյան-Չարենց ճակատագրական հոգեհարազատությունը, որ տրամաբանորեն (այլև զգայականորեն) հուշում են բազմապիսի իրողություններ։

Այսպես. Ալ. Մյասնիկյանին վերաբերող հատվածից անմիջապես հետո վերը հիշատակված օրագրում մի նոր հատվածով հուշարկվում է Տերյանը («Տերյանին ես տեսել եմ միայն մի անգամ, Թիֆլիսում...» և այլն), իսկ առհասարակ օրագիրը՝ 14.III.1934 տարեթվով, սկսում է Տերյանով՝ Թաթախված-շաղախված կախյալ կետերով արձանագրվող այսօրինակ ապրումներով. «...Նրբ անշափ տխուր եմ լինում—հանում եմ (Տերյանի ձեռագրերը՝ Ա. Զ.) և՛ նայում... Կարծես արեգակն է պահված իմ գրասեղանի դարակում... Իմ կյանքի ամենամեծ խնդությունն է դա—հանել մեկ-մեկ այդ ձեռագրերը և նայել...»

—«0, հեռու ընկեր իմ, օ, վահան Տերյան...» (VI, 320),

Այս վերջին տողը Չարենցը մտաբերել է 1920-ին բանաստեղծի մահվան թարմ հետքերով պրած յուր «Վահան Տերյանի հիշատակին» բանաստեղծությունից։ Մտաբերել է, անկասկած, հուշելով ճակատագրական առնչակցական ընդհանրություն իր և Տերյանի, այլև Մյասնիկյանի բախտի ու վախճանի միջև, քանի որ և՛ բախտը, և՛ վախճանը երեքի համար էլ խաչելությունն էր հանուն հայրենիքի... նույն շարագործ ձեռքով։ Ստորև անդրադառնալու պայմանով նախ հիշենք. 1917—1919 թթ. Տերյանը Ազգությունների կոմիտեի անդամ էր և աշխատել է Ստալինի հետ... Հասկանալի է, որ արևմտյան ռազմաճակատից Մոսկվա վերադարձած Մյասնիկյանը Տերյանի պատմածով արդեն իսկ 1919-ի մարտից հանգամանորեն տեղյակ է եղել Ստալինի հակահայկական նենգ դործունեությանը։ Թե որքան հառն ու տառապալից են եղել և՛ մեկի, և՛ մյուսի համար այդ օրերը, աստծուց բացի, իհարկե, հայտնի է եղել նաև նրանց մյուս մտերիմներին՝ Պ. Մակինցյանին, Կ. Միքայելյանին, գուցե և ուրիշների. որոնց բոլորի էլ վերջը տրվեց 1937-ին։ Բայց, այդուհանդերձ, մնում է այդ տառապանքի մի շատ խոսուն վկայություն, որ հավերժորեն պետք է ուղեկցի հայ ժողովրդին. Հակոբ Գյուրջյանի՝ 1919—1920 թթ. քանդակած Վ. Տերյանի դիմաքանդակը՝ այն մահագուշակ աչքերով, այն դառնաթախիծ նկուն դիմաքանդակով, որ ծավալալին իմաստալից մանրամասներով, արտահայտիչ խորություններով ծառացած բողոք է «չար աշխարհի խավարի դեմ», բանաստեղծի և նրա բազմաշարժար ժողովրդի բողոքը...

Արցախի մեծ զավակը, անշուշտ, դիմաքանդակին ներարկել է և սեփական մորմոքները՝ Շուշվա կոտորածի, Արցախը Հայաստանից անջատելու բորբոքուն ցավով ու կսկիծով։ Եվ բնորոշ է, որ այնուհետև 1922—1923 թթ. այդ ամենը հարկ է համարել մարմնավորել «Ողբ» կոմպոզիցիոն քանդակով, այն էլ ոչ թե մեկ, այլ երեք տարբերակով։

Հայտնի է «Գիրք ճանապարհի»-ի փորձության օրերի Չարենցի և Մ. Սարյանի առանձնակի մտերմությունը։ Վերհիշելով փարիզյան իրենց երկարատև

⁹ Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, գիրք I, Երևան, 1966, էջ 66։

բարեկամությունը, Սարյանը շատ բարձր էր գնահատում Գյուլըջյանի արվեստըն ու մարդկային նկարագիրը¹⁰։ Անկարելի է, իհարկե, որ այդ ժամանակամիջոցում Գյուլըջյանը հաղորդած չլիներ Սարյանին Տերյանի մորմոքները, հենց նույն դիմաքանդակի և «Ողբերի» առջև խոսք բացված չլիներ ստալինյան շարագործությունների շուրջը։ Եվ ահա, այդ ամենի շուրջը անկարելի է թե 1934-ի օրերին խոսակցություն բորբոքված չլինի Սարյանի և «Աթիլլե»¹¹, թե՞ Պյերոս-ի հեղինակ Չարենցի միջև։

Այդ և իր կյանքի հետագա բոլոր օրերին Տերյանը եղել է Չարենցի հետ, լախտի ահավոր այլ հանգուցներով ևս, որպիսիք շղթայական մյուս եզրով դարձյալ առնչվում են Ալ. Մյասնիկյանին։ Ինչո՞ւ չբացել փակագծերը։ Տերյանի մահից հետո, հավանաբար, 1921-ի նոյեմբերին, Ալ. Մյասնիկյանը ամուսնանում է Տերյանի այրու՝ Սուսաննայի հետ։ Մտավորական շրջաններում մեր օրերում էլ բերնից բերան պատմվում է, թե Մ. Ֆրունզեն՝ ինչ-ինչ ծանր նախազգացումներով, վիրահատության գնալուց առաջ խնդրել է մտերիմ ընկերոջը՝ տարաբախտ ընթացքի դեպքում, ամուսնանալ իր կնոջ հետ։ Թվում է, ինչ-ինչ զգացողություններ չեն դավաճանում, և ընդունելի է նաև ստորև ներկայացվող համանման վարկածը, որ վերաբերում է Տերյանին ու Մյասնիկյանին։

Հետագարձ հայացքով առանց կասկածելու կարելի է ասել, որ Մյասնիկյանի ջանքերով Վ. Ի. Լենինի ստորագրած փաստաթղթով Միջին Ասիա մեկնող Տերյանը նույնպիսի խնդրանքով դիմել է Մյասնիկյանին՝ աղերսելով անտեր լծողներ հիվանդ կնոջն ու մանկանը։ Մանուկը վախճանվել, և մնացել էր Սուսաննան, և Մյասնիկյանը ամուսնացել է նրա հետ։

Անտարակույս «լիակշիռ» ու «մոնումենտալ» Մյասնիկյանի համար դա եղել է սրբազան պարտք, այլապես ինչպես բացատրել հետևյալ ցնցող իրողությունը։ Մյասնիկյանի վախճանվելուց հետո նրա աշխատասենյակի չհրկվող արկղում գտնվել է միայն մի հեռագիր. մշտապես Մյասնիկյանից հեռու, բուժարաններում բուժվող Սուսաննայի հեռագիրը...

Այսու, կարծում ենք, տարակույս չեն հարուցում նաև այն խոսակցությունները, որպիսիք տարիների ընթացքում հաճախ լսվում էին տարեց մտավորականների շրջաններից։ Հստ այդ խոսակցությունների Տերյանը մեկնում էր Միջին Ասիա, այնտեղից Անդրկովկաս անցնելու նպատակով, և նպատակը եղել է հայրենիքին վերաբերող հրատապ տեղեկություններ հաղորդելը՝ եթե ոչ անձամբ, ապա Տաջենդում բնակվող եղբոր՝ Ջավախեցու միջոցով։ Եվ իրոք, այլապես ինչու պետք է մերձիմահ Տերյանը դիմեր նման քայլի, և Մյասնիկյանը ինչո՞ւ պետք է աջակցեր այդ արարքին...

Ամեն պարագայում և՛ Տերյանի, և՛ Մյասնիկյանի նահատակության սխրանքը մշտապես ուղեկցել է Չարենցին, մենք վաղ կյանքի վերջին տարիներին, և լայնորեն բեկբեկվել նրա ստեղծագործության մեջ։ Բավական է հիշենք ծայրածայր անմխիթար մտահուգություններով ալիքավորվող «Նավդիկեն», պոեմի թեկուզ այս տողը՝ «Ուրիշի կին դարձած իմ Նավդիկեն»։ Երբ, որ խտացնում է հայրենիքի, սեփական մոլուսյի, հարազատ կնոջ և մանկահասակ զավակների բախտին՝ վերաբերող, միատեղ նախազգացվող, ապրվող-վերապրվող կսկիծներ։

«Նավդիկեն» և առհասարակ բանաստեղծի կյանքը՝ վերջին տարիների ստեղծագործություններից ամեն մեկի բովանդակությունը՝ իրական ազդակներով, ողբերգորեն դարձնում ծալքերով, գույներով ու երանգներով, պահանջում է խորունկ, շատ խորունկ վերլուծություն։ Եվ բրանք բոլորն էլ մեր սերնդի համար դեռևս առանձին-առանձին օւշագրության արժանի անելիքներ են։

Սույն դեպքում հարցադրում էլ պես ընդհանուր է, որի առիթով, նաև արդարանալու միտումով, կուզենայինք ասել հետևյալը. սերունդների համար

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 243։

դժվար կլինի պատկերացնել այն դժնի ու անարգ ժամանակները, երբ սարսափահար մտավորականությունը տառաջիորեն հնարավորություն չունի արտահայտելու, էլ չենք ասում՝ գրի առնելու իր իմացածը, կրածը, զգացածն ու մտածածը: Այդ գիտակցությամբ նրանց հետ քիչ կամ շատ շփված մարդիկ ու պարտավոր են մոռացության լմատնել և ոչ մի բեկոր՝ վերականգնելու համար եղեռնի և տեղահանության ողբերգական բեռով հեղափոխությանը բռնալուծարան փարած հայ ժողովրդին, նրա ազատասեր ու լուսավոր զավակներին հետին անխղճությամբ ու նենգությամբ պատճառված չարագործությունները: Այստեղից՝ փաստականի և այսպես ասած՝ «անաղբյուր վկայակոչումների» համադրման անխուսափելիությունը, որ մեր օրերում առհասարակ բնութագրական է սովետական հասարակագիտական բոլոր ոլորտներին: Ասել դառնալու համար այդ չարագործությունների բուն ակունքներին, սկսած 1917-ի հոկտեմբերի չարաղետ այն օրից, երբ ի. Ստալինը ստանձնեց սովետական երկրի ազդեցությունների գործերի տնօրինությունը:

Պատմական որպիսի՝ բախտախաղ...

Այն ժամանակ, երբ Ստ. Շահումյանը արտակարգ լիազորություններով կյանքի գնով հակահեղափոխական ուժերի դեմ պայքարում էր Կովկասում, բարդագույն իրադրության մեջ Ալ. Մյասնիկյանը գլխավորում էր արևմտյան ճակատի գործողությունները, հապշտապ Պետրոգրադ հասած Ստալինը հոգևոր սեմինարիայի կիսատ-պռատ մակարդակով սողոսկում էր պետական վերին ոլորտներ...

Ինչպես հայտնի է, կարճ ժամանակից նրա գլխավորած Ազգությունների ժողովմատում հայկական գործերի գծով աշխատանքի է անցնում Վ. Տերյանը, ուրեմն և այդ ժամանակից էլ հարկ է սկսել բացելու համար չարագործությունների կծիկը, քանի որ հենց մեր տարաբախտ Տերյանն էլ արձանագրել է առաջին ամենամեծ չարագործությունը: Ահա՛ Տերյանից առայժմ մեզ հասած տողերը. «... Ստալինն ասաց՝ մենք իսկույն կեթ կկարգադրենք, որ զորքերը հեռանան, և հայերին հնար տրվի ինքնորոշվելու: Ես վիճեցի: Դա իմ ՅԱՊԻՍԿԱ-ն տալու ժամանակ ասացի: Բայց այսօր... ուրիշ կերպ էր խոսում: Լենինին ես բացատրեցի, և նա, իհարկե, շատ լավ հասկացավ բանն ինչու՞ն է: Տեսնե՞ք ինչ է լինելու: Մի այլ հատված ես. «Այսօր զրույց ունեցա այդ առթիվ և ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչու անհրաժեշտ է առայժմ զորքերը չհեռացնել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը քաղաքականների և փախստականների վերադարձով և այլ գաղափարներով»:

Նա շատ լավ վերաբերվեց և պարզեց, որ երբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, սրանով ուզում է ասել, թե երբ հայերը պահանջեն այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական օրինատացիա ընդունել: Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան—հարկավոր եղած դրամասեր...»:

Ահա և մի երրորդ հատված եղբորը՝ Ն. Տեր-Գրիգորյանին հասցեագրած մտերմական նամակից. «Ես հայտնեցի (Լենինին—Ա. Զ.), որ այդ խնդրի մասին ես ունեմ առանձին իմ կարծիքը, որ ռուսահայերի համար առայժմ պետք է մնալ խորհուրդների հետ, մինչև որ տաճկահայերը հավաքվեն և այն ժամանակ միայն ինքնորոշվեն, իմ կարծիքով՝ ռուսական օրինատացիայով...» և ապա վերջում. «Եվ դու, ով Ներսես-Քովմասդ, որ կարծում էիր, թե «բոլշևիկ վեկավարները» չեն հասկանա հայերիս ներկա վիճակը՝ ֆրոնտը քանդելու և ռուս զորքերը հանելու վերաբերմամբ. այժմ իմացիր և հավատա, որ Լենինը շատ լավ հասկանում է մեր վիճակը...»¹¹:

Այդուամենայնիվ «ֆրոնտը քանդվեց», և ռուսական զորքերը հեռացան

¹¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 479, 480, 482.

կողմակալան ճակատից, և դժվար չէ գլխի ընկնել, թե ում ճիշդագույն ջանքերով:

Հայ ժողովրդի այդ ժամանակի եղբրական կացությունը ուսական զորքերի հետ դեպի Արաքսի այս ափը գաղթող արևմտահայության զանգվածներով, ողբերգորեն ծանր բազմապիսի էջերով պետք է որ ի մի հավաքվի և հրատարակվի հատորներով, ոչ միայն հայ, այլև օտարազգի, առավել ևս ուսականտեսների, այդ թվում Սերգեյ Գորոդեցկու, ուս գններալ Կուլեբայակինի և շատ ուրիշների գրչով արձանագրված հավաստի վկայություններով:

Անկետային իր պատասխաններում Հայկ-Գայր ուսական զորքերի հեռանալը կողմակալան ուղմաճակատից համարել է իր կյանքի ամենասև օրը¹², նույնօրինակ դառն ցավով են մտաբերում այդ օրերը Հովհ. Բաղրամյանը¹³, Հովհ. Խսակովը¹⁴: Հայ ժողովրդի, հայ հասարակայնության մորմոքալի դառնության խորությունը պատկերացնելու համար, սակայն, անհրաժեշտ է վերստին դառնալ Չարենցի ստեղծագործությանը, մտաբերել «Վահագնը», «Հատվածը», «Աթիլան»՝ գրված ցավի ու հուսախաբության անելանելի ծառայումով:

Բրեստի դաշնագրի զուգակցությամբ ուսական զորքերի ուղմաճակատից հեռանալու օրերից էլ ծայր է առնում ստալինյան շարագործությունների հրեշավոր այն շրթան, որով մեթոդիկ սադիզմով լկվեց հայ ժողովուրդը, որը և ընդհանրացրեց Չարենցը՝ «Հոտ է գալիս կրկին արյան Այս վարպետի եփած լաշից» տողերով¹⁵:

Հետագաքձ մտերումներով, սակայն, թվում է, սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայ ժողովրդի զավակների դեմ նման «ճաշեր» այդ «վարպետը ևփում էր» հեղափոխությունից էլ առաջ և այդ նպատակով էլ գործել էր Տուրուխանում¹⁶: Այլապես ինչպես բացատրել օրեցօր վատթարացող առողջությանը Ս. Սպանդարյանի հյուսիսից-հյուսիս աքսորվելը՝ մինչև մահվան դուռը, մանավանդ, որ հետագայում էլ Ստալինի «Երկերի» հատորներում գտնում ենք Սպանդարյանի հոգվածներից:

Կարելի է պատկերացնել, թե՛ որքան էլ մեծագարությամբ հիվանդ, Սպանդարյանի հետ խոսքի բռնվելիս այդ թերուս սեմինարիստը ինչպես է խոցվել-խոցոտվել՝ նեղվելով նրա բազմակողմանի զարգացածությունից, տրամաբանական անկաշկանդ մտածողությունից, սուր լեզվից: Եվ ինչ. արդեն Տուրուխանում ոխակալած մեծագարը Պետրոգրադում հանդիպում է ըստ ամենայնի կրթված Տերյանին, որը նույնիսկ հանդգնում է իր հետ վիճել, իրեն առարկել:

Պատկերացնել պետք է այդ մոլեռանդ հայատյացի կատաղության ու բորբոքվող նենգության շափը...

Կասկած չի կարող լինել, որ առաջին իսկ հանդիպումից Տերյանը կռահում էր, թե որպիսի դավեր է նյութում Ստալինը հարազատ ժողովրդի դեմ, այդ մտահոգությամբ էլ դիմում է Լենինին, հանգամանորեն ներկայացնում Հայաստանի կացությունը:

Իսկապես ասած, դժվար թե կարելի լիներ խաղալ ավելի խառնախառն թուրքերի դեմ պատերազմող ուսական զորքերին հետ կանչել ուղմաճակատից և ինքնորոշում տալ հայությանը: Սա նշանակում էր ջարդված-ավերված,

¹² «Коммунист», 20. II. 1984.

¹³ II. X. Багрян, Мои воспоминания, Ереван, 1979, с. 57—72.

¹⁴ Адмирал флота Советского Союза Иван Степанович Исаков. Документы и статьи, Ереван, 1984, с. 256.

¹⁵ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ե. Չարենցի ֆոնդ, № 64—1:

¹⁶ Տե՛ս Բ. И. Иванов, Воспоминания рабочего большевика, М., 1972, с. 108, 118, 128 և այլն:

որքերով ու գաղթականությամբ լեցուն Հայաստանը նորից մատնել թուրքական զորքերի դատաստանին, անել այն, ինչ կարճ ժամանակից արձանագրեց նույն ինքը չարագործը՝ Հայաստանը կանգնեցնել «անդունդի եզրին» և նրա մոխիրների վրա հանդես գալ փրկարարի կեցվածքով:

Հիշենք Հայաստանում սովետական կարգերի հաստատման հենց հաջորդ օրը՝ 1920-ի նոյեմբերի 30-ին, «Պրավդայում» հրապարակած Ստալինի «Դրությունը Կովկասում» գրույցի տողերը. «Դաշնակցական Հայաստանն անկասկած զոհ գնաց Անտանտի պրովոկացիային, որը նրան զրգռեց ծակաստանի դեմ և հետո խայտառակ կերպով թողեց նրան թուրքերի հոշոտանքը: Հազիվ թե կարելի լինի կասկածել այն բանում, որ Հայաստանին փրկության ոչ մի հնարավորություն չի մնացել՝ բացի մեկից, — Սովետական Ռուսաստանի հետ միանալուց: Այս հանգամանքը, կասկած չկա, որ դաս կծառայի բոլոր այն ժողովուրդների համար և ամենից առաջ Վրաստանի համար, որոնց բուրժուական կառավարությունները չեն դադարում ստորաքարշություն անել Անտանտի առաջ»¹⁷:

Իրոք, մարդկության պատմության մեջ հազիվ թե գտնվի այսպիսի չքմեղացող չարագործ: Ի՞նչ զրգռելու մասին կարող էր խոսք լինել, երբ այսպիսիք են որոշակիորեն 1918-ի առաջին ամիսներից ռուսական զորքերի կովկասյան ռազմաճակատից հեռանալուն հաջորդած իրողությունները:

Զորքերի հեռանալուն սպասող թուրքերը՝ հենց 1918-ի փետրվարից հարձակման անցնելով, մարտի 12-ին գրավում են էրզրումը, ապրիլի 11-ին Կարսը, ապա Ալեքսանդրապոլը, այնուհետև մեկ թևով շարժվում դեպի Ղարաբաղիսա, մյուսով՝ Երևան: Արդեն իսկ 1918-ի հունվարին՝ նորից ի հետևանք ռուսական զորքերի հեռանալուն, Անդրկովկասում կազմավորվում են առանձին-առանձին ազգային զորամասեր, այդ թվում հայոց ազգային զորամասը, և թուրքական առաջարկմանը դիմադրելը մնում է բզկտված հայ ժողովրդին: Թուրքական մեծաթիվ զորքերի դեմ հայ ժողովրդի մղած օրհասական մարտերը Սարգարապատում, Ղարաբաղիսայում, Բաշ Ապարանում իրավամբ համարվում են հերոսական, որի արդյունքում թուրքերը քաշվում են հետ: Նույն օրերին 1918-ի մայիսի վերջերին տեղի է ունենում Թուրք-անդրկովկասյան, այսպես կոչված, խաղաղության կոնֆերանսը, որտեղ գերմանա-թուրքական կողմը առաջարկում է կազմել անդրկովկասյան անկախ հանրապետություններ:

Եվ վերջապես, պետք է որ ասվի ճշմարտությունը. առաջարկը անմիջապես վավերացնում են մենչևիկների ու մուսավաթականների ներկայացուցիչները (Զիենկելի, Խան-Խոյսկի), և, նկատելի հապաղումով, ամենավերջինը ստորագրում է դաշնակցության ներկայացուցիչ Ալեքսանդր Խատիսյանը:

Պատմական տվյալ կացության պայմաններում, անշուշտ, հապաղելը հասկանալի է. անկախությունը՝ որքան էլ բաղձալի, ձեռնադրել էր հայ ժողովրդին: Դրանով բացվում էր դիվանագիտական այն խարդախությունների դուռը, որոնցով, Չարենցի բառերով ասած, շարունակվեց «մկրատվել» հայոց հայրենիքը, այժմ էլ Արևելյան Հայաստանը՝ 1918-ից հետո 1919, 1920, 1921, 1922, 1923 թվականներին: Անմարդկային մի չարագործություն, որի դեմ Չարենցը տաք հետքերով ծառանալով-ծառացել է այս անգամ էլ 1920-ի սեպտեմբերին գրված յոթ բալլադներով և «Մահվան տեսիլով» սերունդներին կոտակելով «գերող ու խաչող» իր անհուն հայրենացալն ու հայրենաբաղձանքը:

...Բայց կլինի մի գիշեր — ու հմայքով նախրյան
Կրարձրանա մշուշից մանկաժպիտ բո Արան:
Նորի՜ց հոգիդ անսփոփ կարոտանքով կվառվի —
Ու սարսափով մի անօգ՝ նորից կելնես դու կովի:

¹⁷ И. Сталин, Сочинения, т. 4, М., 1947, с. 410.

Եվ որպեսզի շտրվի նա ախտաժևտ քո հիւն—
 Ոտքի կելնի նրա հետ հաղարամյա նաիրին...
 Նա կմեռնի որպես զոհ — բայց չե՞ս նաղթի դու նրան,
 — Դա՛ռն և խորհուրդը սիրո, շամբշտաշուրթ Շամիրամ... (1, Երևան,
 1962, 203):

Հայրենիքի սիրո այս դառն խորհուրդը ոչ մի պահ բանաստեղծին չի թքել ամբողջ կյանքում, անգամ թվացյալ անհոգ օրերի՝ «Երեքի դեկլարացիա-
 յի», «Խումանս անսերի», «Կոմալմանախի» կեցվածքների դեպքերում: Չէ որ
 հենց նույն ժամանակներին վերաբերող «Երկիր Նաիրի» պոեմանման վե-
 պում նյութական Հայաստանի այդ կորուստների ցավով է, պատեպատ զարկ-
 վելով, բանավիճում Հոգևոր Հայաստան ըմբռնման դեմ, և պատահական չէ,
 որ հենց առաջին էջերից գծագրվում է Վարդան Մամիկոնյանի անվան հետ
 կապվող «Վարդանի կամուրջ» խորհրդանշը: Վեպի քնարաբերգիծական բեկ-
 բեկուն ընթացքներով արթավորվում-երանգավորվում է այն դառն խորհուր-
 դը, ըստ որի, իրական ատաղձով նկարագրվող դեպքերը հերոսական կամուրջ
 չդարձան ժողովրդի անցյալ, ներկա ու զալիք պատմության միջև¹⁸: Այս ա-
 ոռումով պատահական չէ նաև, որ վեպի էությունը առավել չափով տեղ հասց-
 նելու նպատակով, «Երկիր Նաիրի»-ի 1926-ի II հրատարակությանը Չարենցը
 հարկ է համարել իբրև բնաբան կցել Վ. Տերյանի այս տողերը:

Երկիր Նաիրի՛, երազ հեռավոր,
 Քնա՛ ես քնքուշ թազուհու նման.
 Միթե՞ ե՛ս պիտի երգեմ քեզ օրոր
 Ն՛վ արքայական դնեմ դերեղման...¹⁹

Երբեմն շրջանցվող իրողություններ ու հանգույցներ, որպիսիք պետք է
 որ քննության առնվեն վեպի նոր մեկնաբանություններում՝ ամեն պարագա-
 յում ծառայեցնելու համար հայ ժողովրդի պատմության խորքային ծալքերի,
 պատճառահետևանքային շղթայականությամբ՝ պատմական որոշակի իրա-
 դարձությունների ճշմարիտ լուսաբանությանը:

Որքան էլ բազմիցս շոշափված, հազիվ թե կարողանանք բավարար հա-
 մարել նաև վեպի քննությունը գեղարվեստական-կառուցվածքային-ոճական
 առումներով: Նման առանձնահատկություններով սովորաբար վեպն առնչվում
 է ոչ հայրենական ավանդների: Գոգոլի և Ա. Բելու ստեղծագործությանը բնո-
 ռոշ տարրերի առկայությունը վեպում, իհարկե, անառարկելի է: Եվ սակայն,
 «Երկիր Նաիրի» էական բոլոր հատկանիշներով ազգային գեղարվեստական
 մտածողության ծնունդ է, և անպայման կարիք ունի անմահ «Վերքի» (չէ որ
 «Վերքը» կրկնվում էր, և Չարենցի վեպը նույնպես «Վերք» է) և Հ. Պարոն-
 յանի ավանդների հետ տոհմիկ հարազատության հիմնավոր վերհանումների:
 Ընդ որում Հ. Պարոնյանի պարագայում ավելորդ չէ հիշեցնել բանաստեղծի
 կյանքի ամենահավաստի վկաներից՝ հենց վեպի ստեղծման ժամանակներին
 վերաբերող Մ. Մազմանյանի վկայությունը: Պատմելով, թե որպիսի բզեռու-
 թյամբ էր Չարենցը դիտում «Մեծապատիվ մուրացկանների» Լ. Սիմոնովի
 բեմադրությունը, Մազմանյանը ավելացնում է. «Չարենցի բացականչություն-
 ներն ու ծիծաղը այդ ներկայացման անհրաժեշտ մասերն էին դարձել:

Ներկայացումից հետո Չարենցը խաղացողներին էր կրկնում, մեջ էր
 բերում Պարոնյանի դարձվածքները, դիպուկ արտահայտությունները և եր-
 կար ժամանակ ինձ հետ խոսում էր և նույնիսկ նամակներ էր գրում արեմտա-
 հայ լեզվով»²⁰:

¹⁸ Հանդամանորեն տե՛ս Ա. Չաքարյան, Ավանդների ուժը, Երևան, 1981, էջ 40—60:

¹⁹ Վ. Տերյան, Երկրի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 66:

²⁰ Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1961, էջ 70:

Անկարելի է ուշադրություն չառնել շրջանցվող այս վկայությունը, որքանով, իսկապես որ, պոեմանման վեպի երգիծական երակի կերպարանավորման-ոճական ամենաօրգանական հատկանիշը, ինչպես Պարոնյանի արվեստում, գովելով փնտվելն է, գովասանքով՝ այն էլ գերադրական չափերի գովասանքով, երգիծելով:

1935—1937 թթ. շարունակվող հարցաքննությունների ժամանակ՝ դառնություններ թվարկելով հայ ժողովրդի, հայոց մշակույթի և մտավորականության հանդեպ ցուցաբերված և ցուցաբերվող աղաղակող բազմապիսի անարդարություններ, Ջարենցը կրկնում է, որ ինքը այդպես է մտածում ու խոսում դեռևս 1926 թվականից²¹: Իսկապես, 1926-ից առհասարակ սովետահայ գրականության ականավոր ներկայացուցիչների կողմնորոշումներում որոշակի է զգաստության մի նոր ալիք, որը զգալի չափով պայմանավորված էր Ալ. Մյասնիկյանի կորստյան, Անդրֆեդերացիայի ներսում տիրող բարդ հանգամանքներով: Այս տեսակետից պատմագրությունը մեծ պարտք ունի մեր ժողովրդի առջև: Ամենայն հետևողականությամբ պետք է որ օր առ օր իմաստավորվի Անդրֆեդերացիայի գործունեությունը՝ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, ազգային-քաղաքական և այլ բոլոր ուղղություններով, քանի որ այդ բոլոր առումներով ֆեդերացիան գործում էր ի. Մտալինի մշտական ցուցումներով: Միաժամանակ ծածուկ ու բացահայտ գործում էր Բերիան՝ զանաբար ու լպիրշ վարքով ու նկարագրով: Այդ սրիկան իր սրիկայության մեծ ճանապարհը սկսել էր հայ ժողովրդից՝ դեռևս Բաքվի կոմունայի, 26 կոմիսարների զազանային սպանության ժամանակներից, և, իհարկե, ոչ առանց Մտալինի հետ սերտ դաշնակցության: Իսկապես, ինչո՞վ բացատրել միմյանց հաջորդած այս իրողությունները, մի՞թե պատահականությամբ... Կոմիսարների գնդակահարությանը (1918) հաջորդում է Վ. Տերյանի «գործուղումով» հեռանալը Ազգությունների կոմիսարիատից (1919), և ապա՝ միայն 1921-ին Արտաքին գործերի կոմիսարի տեղակալ Լ. Կարախանը նշանակվում է Լեհաստանի դեսպան. ՎՋԿ-ի կենտրոնական ապարատի աշխատակից, միաժամանակ Մոսկվայի մարզային բյուրոյի քարտուղար Ս. Լուկաշինը՝ Դոնի մարզ, այնուհետև Հայաստան աշխատելու, Կամո Տեր-Պետրոսյանը աշխատանքի է նշանակվում վրաստանի ֆինոնկոմատում և Թիֆլիսում էլ 1922-ին դառնում ավտովթարի զոհ: Նույն 1921-ին Ալ. Մյասնիկյանը գործուղվում է Հայաստան, ապա՝ ընտրվելով Անդրերկրի քարտուղար, նորից դառնում վթարի, այս անգամ արդեն ավիավթարի զոհ: 1922-ին նշանակումով Հայաստան է փոխադրվում Գալը և այլն և այլն:

Այս ամենը արդյո՞ք համարենք պատահականություն, թե՞ հայ ժողովրդի զավակները պարզապես հեռացվում էին Լենինի շրջապատից ու կյանքից՝ հայ ժողովրդի կենսական շահերն ու իրավունքները անարգել ոտնահարելու նպատակով:

Հայտնի է, որ Ալ. Մյասնիկյանի վախճանը այդ օրերին Սոչիում գտնվող Տրոցկին համարել է վրաց մենշևիկների գործը: Իսկ ահա, երբ 1947-ին լույս տեսավ Պ. Պավլենկոյի «Նրա նկարագրությունը» և արժանացավ պետական մրցանակի, հիշում եմ, մեր մտավորականներից տեղյակները խորհրդավոր ժպտում էին՝ ասելով, թե Պավլենկոն եղել է Ալ. Մյասնիկյանի քարտուղարը (թե՞ օգնականը, համենայն դեպս աշխատել է «Заря Востока» լրագրի խմբագրությունում): Մեր օրերի հրապարակայնության պայմաններում էլ ռուս գրական շրջաններում բացահայտ խոսակցություններ են լսվում այն մասին, թե Պավլենկոն այն անձանցից է, որոնք մշտապես վայելել են «մեծ չոր» հովանավորությունը և իզուր չեն նրա առջև մշտապես բաց եղել արտասահմանի դռները²²:

Ինչե՞ն: Բավական է մտաբերել 1923-ին ստեղծված Դ. Դեմիրճյանի «Քաջ

²¹ ՏԿ՝ս ծան. 8:

²² ՏԿ՝ս ծան. 3, էջ 69:

նազարը», Չարենցի «Երկիր նախին» և այլ գործեր, ասելու համար, որ զգաստությունը երբեք չի լքել հայ ճշմարիտ գրողներին: Եվ սակայն, 1925—1926 թթ. ծայր առնող նոր ակնհայտ է: Դրա արտահայտությունն են Բակունցի «Մթնաձորում» տեղ գտած պատմվածքներից շատերը, Ստ. Զորյանի «Հեղկոմի նախագահին» հաջորդած «Վարդաձորի կոմունը» վիպակը (1926—1928) և «Սպիտակ քաղաք» վեպը (1932): Ականավոր արձակագրի այս երեք գործը առանձնացվում է դրանց վերլուծության ու մեկնության անհրաժեշտությունը նոր տեսանկյուններից շեշտելու միտումով: «Օբյեկտիվ», հանդարտ շարադրանքով դրանցում միանգամայն որոշակի արձանագրված են հասարակական երևույթներ, որոնց աղաղակող ծանր հետևանքների մասին բարձրաձայն խոսվում է այսօր: Եվ բնորոշ է. Զորյանի գեղարվեստական արժարժույթները խորապես արձագանքում են Ա. Պլատոնովի երկերին: Այն է. «Հեղկոմի նախագահին» «Սպիտակ քաղաք» արժարժվում է ձախության աղետավոր հիվանդությունը՝ անմարդկային քարսրտության և բյուրոկրատական անտարբերության վերաճումներով, որն իր հետ բերում էր անգամ ընտանիքի քայքայում, իսկ «Վարդաձորի կոմունում» տեսնում ենք գյուղական կյանքի և հարաբերությունների այնպիսի անդրադարձներ, որպիսիք «ձախ» աշարյուրը քննադատությունը իզուր չէ, որ շտապեց որակել որպես «կուլակային կոմունային» գաղափարախոսություն:

Նոր մեկնության կարիք ունի և Դեմիրճյանի այդ տարիների ստեղծագործությունը՝ անմարդկային մոլեռանդության («Նարգիզ», «Նիգյար», «Ռաշիդը»), եսագրություն-եսապաշտության շեշտադրումներով, հասարակական-բարոյական տարակուսանքներով, «նապոլեոն Կորկոտյան» պիեսում շահատակող երեսպաշտության ու կեղծիքի և անպատիժ չարաշահումների մերկացումներով, այն ամենով, ինչ արմատավորվում էր վերացականորեն մտածել և կոնկրետ ապրել, այլև մի բան մտածել՝ մի այլ բան ասել ու պնդել սկզբունքով, որից համբերությունը հատած խորաթափանց գրողը մի օր էլ սկսեց սպիտակի վրա արձանագրում է՝ «Կեցցեն թերությունները»...

Ստիպված ենք վերակրկնել, ասելու համար, որ գրականության այս բուն ընթացքը տեականորեն եղել է «ձախ» քննադատության կրակի տակ, ուղեկցվել տգետ ոտնձգություններով, գաղափարական-քաղաքական կոպիտ ու գոհճիկ հարձակումներով: Ասել՝ ավելացնելու համար նաև, որ գրանցից խուսափելու և պաշտպանվելու մտահոգությամբ գրողները չէին կարող չխուսափել, ինչ-որ չափով ու ձևերով հարմարվել, կամ բանավիճելիս արդարանալ, և այս ևս միշտ պետք է նկատի ունենալ ու մարդկայնորեն հասկանալ: Ժողովրդի այդ արդար զավակների հետ շա՛տ ու շա՛տ են խոսել դատավորի կեցվածքով, դատել վերին դատախազի ահեղ խստությամբ ու դաժանությամբ:

Հիշենք թեկուզ տարիներով շարունակված հարձակումները «Վարդանանքի» դեմ, որի ճնշման տակ Դեմիրճյանը հարկադրված էր վերանայել-վերամշակել վեպը ինչ-ինչ անհեթեթ դիտողությունների համաձայն, ինչպես, ասենք, Վարդանանց պատերազմի ժամանակներում հայ եկեղեցու դերի, նահատակության և այլ հարցեր: Իսկ այժմ, ահա՛, անհրաժեշտ է դառնալ և հիմնական բնագիր ընտրել վեպի առաջին տարբերակը:

Այժմ պետք է հասկանալ ու բացատրել, այլև փաստարկելով պատճառաբանել գրականության և արվեստի գործիչների բարդ կացությունը ստալինյան հրեշավոր ժամանակներում:

Առաջնորդվել արդիականության պատկերման պաշտոնական թելադրանքով՝ նշանակում էր գնալ կեղծիքի և կյանքը գունազարդել ըստ «Կյանքը ուրախ է դարձել, կյանքը երջանիկ է դարձել, ընկերներ» պիղծ լուզունգի: Եվ ահա, 30-ական թվականների նախաշեմից արագորեն փթթող հասարակական-քաղաքական հարանման խոտոր հանգամանքների պայմաններում գրականությունը յուր խորհող ու ազնիվ ներկայացուցիչներով, ասես, բնազդային դիմադարձությամբ, մղվում է դեպի անցյալը:

Նախ հունավորվում է ինքնակենսագրական վեպը՝ հերթականորեն նշանավորվելով Գ. Մահարու երեքգլխյան «Մանկություն» և «Պատանեկություն» մասերով, Վ. Թոթովենցի «Վյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» և Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպերով։ Միաժամանակ աստիճանաբար շրջանառության է կոչվում և խոսքովում ժողովրդի պատմությունը՝ նոր ժամանակների դեմքերով ու դեպքերով, ապա և հնօրյա պատմությունը։ Դժվար է գերազանհատել սույն կողմնորոշման փրկարար նշանակությունը։ Բացահայտ ու գաղտնի հրահանգներով ու ճնշումներով սովետական ժողովուրդներին, այդ թվում հալ ժողովրդին, պարտադրվում էր մոռանալ իր պատմությունը, քաղաքացիական-մարդկային վարքն ու նկարագիրը, յուր ոգեղեն ավանդները — և գրականությունը անվրեպ գտնում է ելքը, այդ ամենը հիշեցնելու և վերաբորբոքելու ուղին։

Սա գրապատմական որոշակի օրինաչափություն է՝ ծայր առած 30-ական թվականների սկզբից և պետք է որ անպայման շտկվի ակնհայտ այն վրիպումը, ըստ որի օրինաչափությունը կապվում է Հայրենական պատերազմի հետ։ Կասկած չի կարող լինել, որ պատերազմի տարիներին պատմական անցյալին դիմելու գրականության հունը լայնանում է շատ ու շատ առումներով, մինչև հնագույն ժամանակները՝ «Հայկի և Բելի» առասպելը, ձգվող շառավիղով, ինչպես և անհամեմատ նվազում են դասական գրականության հրատարակության վրա սահմանված արգելքները։ Այսպես, եթե Զարենցը հարցաքննությունների ժամանակ բողոքում էր, թե ինչու չի թույլատրվում հրատարակել «Գեորգ Մարգարիտունին», ապա պատերազմի տարիներին դժգոհությունները նկատելիորեն նվազում են, հղոր թափով վերաբորբոքվում է հայրենասիրական թեմատիկան։ Բայց ամեն դեպքում ոգեղեն ներքին լիցքը գալիս էր 30-ական թվականներից, ինչպես վերը հիշատակված կենսագրական վեպերից, այնպես էլ Զարենցի, Դեմիրճյանի, Զորյանի, Բալեանցի տեղական ու գործնական կողմնորոշումներից։ Ավելի ճիշտ, գալիս էր հանգույց առ հանգույց մշակված ոգու փիլիսոփայությունից, որի արժեքը՝ որքան էլ գրականագիտորեն բավականաչափ շոշափված, հայ ժողովրդի կենսագրության ճանապարհին, հենց մեր օրերի տեսանկյունից առայժմ շատ կողմնորոշման է չվերծանված։ Զիջողական կամ անզիջում մեղադրանքները՝ անցյալի հանդեպ նիհիլիստական վերաբերմունք և այլն — մի կողմ դրած, հարկ է էջ առ էջ վերլուծորեն բացել «Գիրք ճանապարհի»-ի պոեմների, տաղերի ու խորհուրդների, անտիպ էջերի իմացական դասերի ու պատգամների ժալթերը՝ որսալի ու անորսալի հազարավոր թաքստոցներով։ Հնչեցնել, ասենք, բնությանը ձոնված տաղի այս ծալքը.

Օ՛, բնություն, օ՛, Մայր։—

Բայց մարդը, տիրանալով քիչ-քիչ անեզրական հանձնի,

Այն շինել է շրթա ու կապանք,

Կեղևքելու համար ուրիշների անձիր,

Տվնշական, հանապազօրյա աշխատանքը. —

Եվ նրանք, որ եղել են դաժան ու ամենի,

Որ ճորտերից շորթել են քո բարեքներն անուշ։—

Շղթայել են ոգին բնապաշտ և մատնել մա՛րի՝

Պղծելով և նզովելով քո անունը... (IV, 384)։

Զարենցի, ինչպես և վերջին տասնամյակներում Պ. Սևակի և Հր. Մաթևոսյանի ստեղծագործության բոլոր դասերն ու պատգամներն ամենուրեք հեռահար են և, իմ կարծիքով, ազգային նիհիլիզմի մասին առհասարակ խոսք չի կարող լինել Զարենցի «Գիրք ճանապարհի»-ում։ Ազգային նիհիլիզմ կոչվածը, ամեն կարգի վերակերպություններով, թաքցնում է շրջուն հակադիր այլ իմաստ, այն, ինչ կյանքի վերջին տարիների գրություններում բնութագրել է Դեմիրճյանը, գրելով. «Զարենցը օղակն էր անցյալ կուլտուրայի և նոր կուլտուրայի։ Զարենցը ռեակցիա էր Բերիայի նացիոնալիզմի. կոնսերվատիվներից։ Նրա ժառանգությունն արդեն հասել է ժողովրդի սրտին.

կոնտրեպոզիցիայով. արգելելով և հալածելով ազգային արժեքները՝ գրգռում էին հայ ժողովրդին ի պատրիոտիզմ, որ որակվում էր իբրև նացիոնալիզմ²³։ Այնպես որ, տեղն է ասել նաև հենց այս տեսակետից, որ պատահական չէին իր ժամանակին «Գիրք ճանապարհի»-ին հասցեագրված, մեղմ ասած՝ «կոնտրառնցյան» հիշյալ տողերը։

Կոչ են անում աղեկեզ

Քեզ դեպի Սիփան.

Դեպի Սասուն,

Եվ դեպի —

«Լեւոն» ատնութ.ան:

Եվ դու չես էլ հասկանում,

Քեզ չի էլ հուզում

Այդ զառամյալ, զառանցող

Ունեղի լեզուն...²⁴

Ի՞նչ արած, այսպես էլ է լինում...

Ոգու փրկսփայտության իմացական նույնօրինակ դասեր ու պատգամներ են թաքցնում Բակունցի «Կյոբեսը», Աբովյանին նվիրված վեպը, 30-ական թվականների կեսերին վերաբերող Դ. Դեմիրճյանի «Չարգյահ», «Գիրք ծաղկանց» պատմվածքները, «Երկիր հայրենի» դրաման։ 1937—1938 թթ. ստեղծված դրամայի իմաստավորված և իմաստավորվելիք բազմապիսի տեսանկյունների շարքում արդեն ժամանակն է լիաձայն հնչեցնել մասնավորապես հայրենիքի բախտին վերաբերող հարցերում ալլախոհության պաշտպանությունը դրամայում՝ ի դեմս Մագիստրոս իշխանի կերպարի և նրա շուրջը ծավալվող դրամատիկ իրադարձությունների, ինչպես և, որպես ալլախոհության հակադրություն, հայրենիքի դավաճան (կամ ժողովրդի թշնամի) հասկացողության ցուցադրումը ի դեմս Վեստ Սարգսի և նրա արարքների։

Լիաձայն նույնպիսի հնչեցման կարիք ունի նաև «Գիրք ծաղկանցը»՝ արդիական-կենսագրական հետևյալ իրողություններով։ «Գիրք ճանապարհի»-ի փորձությունից որոշ ժամանակ անց իր մի այլ պոռթկման առիթով 1935 թ. մայիսի կեսերին Չարենցը ենթարկվում է մի նոր փորձության։ Այդ օրերին համապատասխան դիմումով Թբիլիսիում նրան ընդունում է Բերիան։ Այդ օրը, գուցե և դառնար բանաստեղծի կյանքի վերջին օրը, եթե շրջապատված չլիներ Տիգրան Տաբիձեի եղբայրական անձնուրաց հոգացողությամբ (այդ մասին սարսուղազդու տողեր են պահպանվել Տաբիձեի կնոջ՝ Նինա Տաբիձեի հուշերում)²⁵։ Հենց այդ ժանր օրերին մամուլում հրապարակվում է «Գիրք ծաղկանցը»։ Պատմվածքի սյուժետային առաջին հանգույցը հայոց միջնադարյան տաղերգուի դրամատիկ կյանքի և առինքնող ոգու դրվագ է։ Երկրորդը վերաբերում է հայոց արվեստի ու գրականության մատյաններ փրկող, պահող-պաշտպանողներին։

Գրականագիտությունն անդրադարձել է պատմվածքի պատմական հենքին ու թելերին։ Եվ սակայն, վերհանման առավել կարիք ունեն նրա արդիական ներքին լիցքերն ու ազդակները։ «Գիրք ծաղկանցը» որոշակիորեն գրված է «Գիրք ճանապարհի»-ի փորձության թելադրանքով, և նրա արդիական բնորոշ ոչ այլ ոք է, քան ինքը՝ «բանասարկու և նախանձահույզ» դավերով ու հալածանքներով օղակված Չարենցը։ Պատահական չէ «Գրքի» հերոսի Զվարթ անունը. հիշենք, իր բանաստեղծական արվեստ համարված դարունակում էր կոչել «Զվարթ գիտություն»։

²³ ԳԱԹ, Դ. Դեմիրճյանի ֆոնդ, № 787։

²⁴ Ն. Չարյան. Ամրոց, Երևան, 1935, էջ 50։

²⁵ Հուշեր Նդիշե Չարենցի մասին (Երևան, 1986) գրքում գետեղված Նինա Տաբիձեի «Հանդիպումներ Չարենցի հետ» հուշերից (էջ 217—220) այդ հատվածները ժամանակին հանվել են։ Հուշերի ուսման մեքենագրված ամբողջական բնագիրը պահպանվում է մեզ մոտ։

Նորից կարճ ժամանակից, առավել ահավոր բախտ վիճակվեց բանաստեղծի ամբողջ, բնականաբար ամենից ավելի, ձեռագիր ժառանգությանը, ե այս անգամ էլ Չարենցի ինքնագիր մատյանների հետ առնչվեց Դեմիրճյանի պատմվածքի երկրորդ դրվագը: Համառոտակի մտաբերենք նաև այդ երկրորդը, հիշեցնելու համար հայ ժողովրդի ավանդական վարքի՝ մեր օրերում չափազանց անհրաժեշտ, առաքինություններ:

Ավանդախառն այդ պատումն ասում է, որ Հուսիկ անունով մի որմնադիրի թոռան թոռ, քաղցի մատնելով ընտանիքը, Դամասկոսի մեյդանում ցորենի փոխարեն գնել է Սաղկանց գիրքը և հասցրել հայրենիք:

Ջարմանալի է, իրոք. պատումը գրված է ճիշտ և ճիշտ այն եղելության ոգով, ինչ պատահեց Չարենցի և նրա ձեռագիր ժառանգության հետ: Տասնամյակների հեռավորությունից ապշում ես, թե այդ ո՞ր զգայարանով գիտեր գրողը, որ իր օրերում ևս անգնահատելի է հուսիկների գերը. շանթահարվում ես նաև, թե այդ ինչպե՞ս գուշակից Չարենցը վստահել շնագրերը նրան, ում կարելի էր վստահել...

Ավանդապաշտ-ավանդապահ հայ ժողովրդի կյանքում, դեռևս կենդանության օրերին ավանդություն է դարձել իր մեծ գավակի տիտանական ոգու սխրանքը, և այժմ արդեն նրանից անբաժան է մի եզրով Հուսիկին, մյուսով Դեմիրճյանի պատմվածքի մյուս հերոսներին՝ Ղուկիանոսին ու Թաղեին, առնչվող Չարենցի ձեռագիր ժառանգությունը փրկող Ռեզինա Ղազարյան անուն-ազգանունով հայտնի անձնավորության մերժամանակյա իրական պատումը: «Գիրք ծաղկանցում» Ջվարթի կյանքին ու պատմությանը միահյուսված մի պատում, որ տրոփում է Եյսօրինակ հոգեցունք լիցքերով. «Ղուկիանոսը նրա գիրքը գաղտնի տարավ Թաղեի մոտ, և նրանք թաղեցին քարե գաղտնարանում»:

Հետևյալ օրը վանականները Ջվարթին փակեցին մի մութ խցիկում և թույլ չտվին երգելու ծաղիկների երգը: Նրան այցելում էր միայն Ղուկիանոսը: Ջվարթը թախիծով նայում էր նրան և սկսում խոսել, բգել իր վեպը: Ղուկիանոսը լսում էր, լսում, և երկուսով մոռանում <էին>, որ բանտի մեջ էին...

Բայց մի օր էլ նրան արգելեցին այցելել Ջվարթին: Այնուհետև Ղուկիանոսը գալիս էր բանտի լուսամուտից նայելու, գլուխը ծռած, տրտում ժպտում էր Ջվարթը և նայում երազով, կարծես անհոգ:

Նվ մեռավ Ջվարթն այդպես, հոգում ծաղիկներ...»:

Վասկած չի կարող լինել, որ 1935-ի ամռան օրերին արդեն մեկուսացված Չարենցը կարդացել է Դեմիրճյանի պատմվածքը, և պատկերացնել պետք է, թե որպիսի ապրումներով ու խոհերով՝ մանավանդ պատմվածքի այս տողերին դառնալիս. «...Անէանա մարմինն իմ որպես ծուխ և մնան միտք իմ ճշմարտության: Դուք կգողանաք իմ մարմինը, ցրիվ կտաք որպես խոփ, բայց իմ միտքը կմնա որպես լույսն արեգական: Մի դիպչեք ինձ, որդիք խավարի... ճշմարտությունն եմ ես, և ես վրեժխնդիր կլինեմ ձեզանից»²⁶:

Իսկապես, ահեղ է ճշմարտության վրեժխնդրությունը. վաղ թե ուշ, ահեղ է, և դրա վկայությունն են հրապարակայնության մեր օրերը...

ПО СЛЕДАМ ИСТОРИКО-ЛИТЕРАТУРНЫХ СОБЫТИИ

А. Г. ЗАКАРЯН

Резюме

В наши дни в духе гласности получают новое осмысление и освещение многие страницы истории армянского народа, а также многие биографические факты жизни деятелей прошлого, в частности, В. Терьяна, Ал. Мясникяна, Е. Чаренца и др.

Посредством анализа исходных позиций писателей Д. Демирчяна, Ст. Зоряна, Е. Чаренца, А. Бакунца, пересматриваются некоторые представления о литературном процессе 20—30-х годов.

²⁶ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. III, 1977, էջ 66, 67: